Հաշվետվություն

Հ. Հակոբյանի՝ 2017թ. հոկտեմբերի 26-29-ը Ղազախստանի Հանրապետության քաղաք Ալմաթի գործուղման արդյունքների մասին

Գործուղված պաշտոնատար անձ՝

Հմայակ Հակոբյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի անշարժ գույքի գնահատման և համակարգված դիտարկումների վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետության քաղաք Ալմաթի, 2017թ. հոկտեմբերի 26-29-ը

Հրավիրող կողմը՝

Գնահատողների մասնագիտական կազմակերպությունների ազգային ասոցիացիան,Ղազախստանի մասնագիտական գնահատողների ինստիտուտը

Գործուղման նպատակը՝

«Գնահատման գործունեությունը: Հիմնական միտումները և հեռանկարները» թեմայով գնահատողների 2-րդ միջազգային համաժողովին մասնակցություն

Քննարկված թեմաները՝

Համաժողովի ընթացքում քննարկվեցին գնահատման հրատապ խնդիրների վերաբերյալ հարցեր՝ գնահատման գործունեությունը կարգավորող օրենսդրության առաջիկա փոփոխություններ, գնահատման ոլորտում ինքնակարգավորման ստեղծում, ինքնակարգավորման փորձը Ռուսաստանի դաշնությունում, պետական կարիքների համար գույքի առգրավման հետ կապված հիմնախնդիրներ, վնասի չափերի գնահատում, մեքենաների և սարքավորումների գնահատում և այլն:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի անշարժ գույքի գնահատման և համակարգված դիտարկումների վարչության պետ Հմայակ Հակոբյանը «Գնահատման գործունեությունը: Հիմնական միտումները և հեռանկարները» թեմայի շրջանակներում ներկայացրեց Հայաստանում գնահատման գործունեության պատմությունը՝ մատնանշելով առկա շուկայական գնահատման խնդիրները և զարգացման հեռանկարները:

Հայաստանի մասնակցության արդյունքները

Համաժողովի ընթացքում Հմայակ Հակոբյանի պատվիրակությունը մի շարք կարևորագույն երկկողմ հանդիպումներ է ունեցել, որոնք կնպաստեն գնահատման գործունեության շուրջ միջազգային համագործակցության ամրապնդմանը և խորացմանը: Հայաստանի Հանրապետությունը, ներկայացնելով իր լավագույն փորձը, պատրաստակամություն է հայտնել համագործակցելու և կիսվելու այդ փորձով ցանկացած այլ պետության հետ:

Ներկայումս աշխատանքներ են տարվում շուկայական գնահատման գործունեությունը կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ՝ մեծացնելով գնահատման գործունեություն իրականացնող կազմակերպությունների պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը:

ՀՀԿԱԱԳԿՊ-ի աշխատակազմի
անշարժ գույքի գնահատման և համակարգված
դիտարկումների վարչության պետ
Հմայակ Հակոբյան
13.11.2017